

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### «ԳԼՈՒԲԱԼ ԲՐԻՋ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ 8-12<sup>րդ</sup> ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

Սույն հետազոտությունն իրականացվել է 2019 թվականի փետրվար ամսին «ԳԼՈՒԲԱԼ ԲՐԻՋ» կրթահամալիրի 11-րդ դասարանի աշակերտուհիներ Աննա Մանասյանի և Իզաբելլա Մուրոյանի կողմից «ԷՄՊԻՐԻԿԱ» հետազոտական ընկերության տնօրեն Մարիամ Մխիթարյանի գլխավորությամբ «Մասնագիտական կողմնորոշում» ծրագրի շրջանակներում:

Հետազոտությունը նպատակ էր հետապնդում ուսումնասիրելու աշակերտների մասնագիտական կողմնորոշման առանձնահատկությունները: Հետազոտության ընթացքում թիրախավորված հիմնական խնդիրներն էին.


- ✗ Պարզել մասնագիտության ընտրության հարցում աշակերտների տրամադրվածությունը
- ✗ Պարզել մասնագիտության ընտրության վրա ազդեցության գործոնները
- ✗ Պարզել մասնագիտության ընտրության դրդապատճառները
- ✗ Բացահայտել հետագա կրթությունը շարունակելու՝
  - նախընտրելի երկիրը
  - նախընտրելի հաստատությունը
  - պատճառները
- ✗ Բացահայտել մասնագիտության վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուրները:

Հետազոտությունն իրականացվել է քանակական հետազոտության՝ դեմ առ դեմ հարցաթերթիկային հարցազրույցի մեթոդի կիրառմամբ: Հավաքագրված տվյալների վերլուծությունը կատարվել է «IBM SPSS Statistics 20» վիճակագրական փաթեթի միջոցով, հաշվարկվել են հաճախականություններ, փոխկապվածություններ և կատարվել է խաչաձև վերլուծություն: Հարցմանը մասնակցել են հիշյալ կրթահամալիրի 50 աշակերտ, որոնց սեռատարիքային բնութագրիչները տե՛ս ստորև ներկայացված աղյուսակ 1-ում և գծապատկերներ 1-ում և 2-ում:


**Աղյուսակ 1. Հարցված աշակերտների նկարագիրը՝ ըստ սեռի և դասարանի.**

Դասարան	Սեռ			
	Արական		Իգական	
	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս
8-րդ դասարան	4	16.7	3	11.5
9-րդ դասարան	1	4.2	4	15.4
10-րդ դասարան	7	29.2	6	23.1
11-րդ դասարան	8	33.3	10	38.5
12-րդ դասարան	4	16.7	3	11.5
<b>Ընդամենը</b>	<b>24</b>	<b>100.0</b>	<b>26</b>	<b>100.0</b>

**Գծապատկեր 1. Հարցվածների սեռը.**



**Գծապատկեր 2. Հարցվածների դասարանը.**



Համաձայն հետազոտության արդյունքների՝ բոլոր հարցվածներն ունեին որոշակի դիրքորոշում իրենց ապագա մասնագիտության ընտրության վերաբերյալ: Հատկանշական է, որ հարցվածների կողմից ստացվել է 22 տարբեր մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվություն: Ըստ զծապատկեր 3-ի՝ պարզ է դառնում, որ ամենահաճախ հնչած 3 տարբերակներն են.


- 1) Իրավաբանություն – 17.3%
- 2) Բժշկություն – 15.4%
- 3) Ծրագրավորում և տնտեսագիտություն – 11.5-ական տոկոս:

Ինչպես նշվեց, ամենահաճախ հնչած տարբերակներից 3-րդ հորիզոնականը կիսում են «ծրագրավորում» և «տնտեսագիտություն» մասնագիտությունները միևնույն ցուցանիշով: Հարկ է նշել, որ հետազոտության արդյունքներն ամփոփելիս միևնույն բազային կրությունն ապահովող մասնագիտությունների մեջ խմբավորել ենք համապատասխան նեղ մասնագիտացումները, մասնավորապես՝

- իրավաբանություն – իրավաբան, փաստաբան և քրեագետ,
- տնտեսագիտություն – տնտեսագետ, ֆինանսիստ,
- բժշկություն – բժիշկ, պլաստիկ վիրաբույժ, ատամնաբույժ:


Մյուս մասնագիտացումների ցուցանիշները տե՛ս զծապատկեր 3-ում:

**Գծապատկեր 3. Հարցվածների նախընտրելի մասնագիտացումները.**



Անդրադառնալով մասնագիտության ընտրության վրա ազդեցություն ունեցող հնարավոր գործոններին՝ պարզեցինք, որ աշակերտների մասնագիտական կողմնորոշման հարցում մեծ դեր են խաղացել սեփական նախասիրություններն ու հակումները (43.4%), այնուհետև նպաստել է ծնողների խորհուրդը (22.4%) և ընտրանիքի անդամի/ների՝ տվյալ մասնագիտությամբ աշխատելու հանգամանքը (21.1%): Չնայած ցածր ցուցանիշին (1.3%), ուշագրավ է, որ ազդեցության գործոնների շարքում հիշատակվել է նաև կրթահամալիրի կողմից կազմակերպված «Մասնագիտական կողմնորոշում» ծրագիրը (տե՛ս գծապատկեր 4):


**Գծապատկեր 4. Ազդեցության գործոնները.**



\* Բազմակի պատասխանի հնարավորությամբ (50 հարցվածներից ստացել ենք 76 պատասխան)

Ազդեցության գործոններից գատ, կարևոր էր նաև ուսումնասիրել մասնագիտության ընտրության դրդապատճառները: Համաձայն հետազոտության արդյունքների՝ հարցվածների կեսից ավելին կարևորում էր ապագայում տվյալ մասնագետների պահանջված լինելը (30.6%), ինչպես նաև բարձր վարձատրվելը (27.8%, տե՛ս գծապատկեր 5):

**Գծապատկեր 5. Դրդապատճառները.**



\* Բազմակի պատասխանի հնարավորությամբ (50 հարցվածներից ստացել ենք 72 պատասխան)


Հարցվածների սեռի և մասնագիտության ընտրության դրդապատճառների միջև խաչաձև վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ տվյալ հարցում տարբեր սեռի ներկայացուցիչների գերադասությունները միմյանցից էականորեն տարբերվում էին: Ուշագրավ է, որ արական սեռի ներկայացուցիչներն առավել կարևորում էին բարձր վարձատրությունը և արտերկրում հեշտությամբ աշխատանք գտնելու հնարավորությունը, մինչդեռ աղյուսակ 2-ում ներկայացված մնացած դրդապատճառները առավել կարևոր էին իգական սեռի ներկայացուցիչների համար (տե՛ս աղյուսակ 2):

**Աղյուսակ 2. Դրդապատճառները՝ ըստ սեռի.**

Դրդապատճառները	Սեռ			
	Արական		Իգական	
	Քանակ	Տոկոս	Քանակ	Տոկոս
Այս մասնագիտությունն ապագայում պահանջված կլինի	9	40.9	13	59.1
Այս մասնագիտության տեր մարդիկ բարձր են վարձատրվում	11	55.0	9	45.0
Այս մասնագիտությունից ինձ բավարարված կզգամ	6	46.2	7	53.8
Այս մասնագիտության տեր մարդիկ արտերկրում հեշտությամբ են աշխատանք գտնում	5	55.6	4	44.4
Այս մասնագիտությունը հնարավորություն է տալիս աշխատել ազատ գրաֆիկով	-	-	3	100.0
Այս մասնագիտությունն ունի ստեղծագործ բնույթ	-	-	2	100.0
Այս մասնագիտության տեր մարդիկ Հայաստանում հեշտությամբ են աշխատանք գտնում	-	-	2	100.0
Դժվարանում եմ պատասխանել	-	-	1	100.0
<b>Ընդամենը</b>	<b>24</b>	<b>100.0</b>	<b>26</b>	<b>100.0</b>

Հետազոտության շրջանակներում փորձ է արվել բացահայտել աշակերտների կրթությունը շարունակելու հետագա պլանները: Առաջնահերթ էր հասկանալ, արդյո՞ք, աշակերտը ցանկանում է ուսումը շարունակել Հայաստանում, թե արտերկրում: Ըստ գծապատկեր 6-ի՝ հարցվածների գերակշիռ մասը նախընտրում է հետագա կրթությունը ստանալ Հայաստանում (56.0%): Ջարմանալիորեն, աշակերտների ընդամենը 4.0%-ը (կամ 2 հարցված) դժվարացավ պատասխանել տվյալ հարցին:


**Գծապատկեր 6. Կրթությունը շարունակելու հետագա պլանները.**



Այն հարցվածներն, ովքեր նախատեսում էին կրթությունը շարունակել Հայաստանում, ԲՈՒՀ-ի ընտրության հարցում ունեին հետևյալ դիրքորոշումները (տե՛ս գծապատկեր 7): Աշակերտների


53.6%-ը նպատակադրված էր ընդունվել Հայաստանի Ամերիկյան Համալսարան, հավասար թվով աշակերտներ՝ Երևանի Պետական Համալսարան և Ֆրանսիական համալսարան (10.7-ական տոկոս): Ավելի քիչ տոկոս են կազմել մյուս ԲՈՒՀ-երի (Երևանի Պետական Բժշկական Համալսարան, Ոստիկանական Ակադեմիա, Հայաստանի Պետական Պոլիտեխնիկական Համալսարան, Երևանի Պետական Մանկավարժական Համալսարան, Հայաստանի Ֆիզիկական Կուլտուրայի Եվ Սպորտի Պետական Ինստիտուտ) վերաբերյալ պատասխանները:

**Գծապատկեր 7. Հայաստանում սովորողների համար նախընտրելի ԲՈՒՀ-երը.**




Հարցվածների կողմից առանձնացվել են նաև որոշակի չափանիշներ, որոնք կարևորվել են ԲՈՒՀ-ի ընտրության հարցում: Հարցվածների կողմից ամենահաճախ ստացված պատասխանը եղել է ԲՈՒՀ-ի կողմից լավագույն կրթության ապահովումը նախընտրած ոլորտում (48.3%): Հարցվածների մեջ կային աշակերտներ, որոնց ընտրած մասնագիտության որակավորումը Հայաստանում ապահովում է միայն մեկ ԲՈՒՀ, այդ իսկ պատճառով, այն ստացել է պատասխանների 20.7%-ը (տե՛ս գծապատկեր 8):

**Գծապատկեր 8. ԲՈՒՀ-ի ընտրության չափանիշները.**



Ինչպես արդեն նշեցինք, հարցվածների 40.0%-ը պլանավորում էր կրթություն ստանալ արտերկրում: Հետազոտության տվյալները փաստում են, որ նրանց գրեթե կեսը՝ 45.0%-ը (կամ 9 հարցված), նախապատվությունը տալիս է ԱՄՆ-ին (տե՛ս գծապատկեր 9):

**Գծապատկեր 9. Արտերկրում սովորողների համար նախընտրելի երկրները.**




Չնայած այն հանգամանքին, որ հարցվածները հստակ դիրքորոշում ունեին արտերկրում սովորելու վերաբերյալ, սակայն հաստատության ընտրության հարցում աշակերտները դեռևս չէին կողմնորոշվել (տե՛ս աղյուսակ 3): Հատկանշական է, որ կողմնորոշված ուսանողների շրջանակում հաստատությունները չէին կրկնվում:

**Աղյուսակ 3. Արտերկրում սովորողների համար նախընտրելի հաստատությունները.**

Հաստատություն	Քանակ	Տոկոս
Art School	1	5.0
Police Academy	1	5.0
Regents School	1	5.0
School of Milan	1	5.0
Tufts University	1	5.0
University of Brighton	1	5.0
UCFB	1	5.0
UC LA	1	5.0
UCSF	1	5.0
Vienna's Medical School	1	5.0
Washington University	1	5.0
Yale Law School	1	5.0
Դժվարանում եմ պատասխանել	8	40.0
<b>Ընդամենը</b>	<b>20</b>	<b>100.0</b>


Քանի որ աշակերտների մեծամասնությունը չունեին հստակ կողմնորոշվածություն հաստատության ընտրության հարցում, ուստի նրանց որոշ մասը ներկայացրել է դրդապատճառներ երկրի, որոշներն էլ՝ ԲՈՒՀ-ի ընտրության վերաբերյալ: Երկրի ընտրության հարցում մեծ դերակատարում ունի առաջադեմ ԲՈՒՀ-երի առկայությունը, իսկ հաստատությունների ընտրության հարցում հարցվածները կարևորում էին ապահովվող կրթական որակը (տե՛ս գծապատկեր 10):

**Գծապատկեր 10. Երկրի/հաստատության ընտրության դրդապատճառները.**



Հետաքրքիր էր նաև բացահայտել այն հիմնական աղբյուրները, որոնցով աշակերտները տեղեկատվություն էին ստանում իրենց հետաքրքրող մասնագիտության վերաբերյալ: Ինչպես ակնկալվում էր, ցուցանիշով առաջատարը հանդիսացան սոցիալական ցանցերը (33.3%): Մեծ թվով աշակերտներ հենց իրենց սեփական նախաձեռնությամբ էին մասնագիտությամբ հետաքրքրվում (19.4%): Վերոնշյալ աղբյուրներին քիչ էին զիջում գրքերը և մասնագիտական գրականությունը (17.2%): Հարկ է նշել, որ տպագիր մամուլը, ստանալով պատասխանների ընդամենը 1.1%-ը, չի հանդիսացել որպես տեղեկատվության հիմնական աղբյուր (տե՛ս գծապատկեր 11):

**Գծապատկեր 11. Մասնագիտության վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուրները.**



\* Բազմակի պատասխանի հնարավորությամբ (50 հարցվածներից ստացել ենք 93 պատասխան)

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ.

- ▶ Կրթահամալիրի աշակերտների շրջանակներում թոփ 3 մասնագիտություններն են՝ իրավաբանություն, բժշկություն, ծրագրավորում և տնտեսագիտություն, որտեղ վերջին երկուսը կիսում են 3-րդ հորիզոնականը:
- ▶ Մասնագիտության ընտրության վրա որպես ազդեցության գործոն հիմնականում հանդիսանում են սեփական նախասիրություններն ու հակումները:
- ▶ Մասնագիտության ընտրության հիմնական դրդապատճառներն են ապագայում տվյալ մասնագետների պահանջված լինելը, ինչպես նաև բարձր վարձատրվելը:
- ▶ Հարցվածների գերակշիռ մասը նախընտրում է հետագա կրթությունը ստանալ Հայաստանում՝ նախապատվությունը տալով Հայաստանի Ամերիկյան Համալսարանին, ինչպես նաև Երևանի Պետական Համալսարանին և Ֆրանսիական համալսարանին:
- ▶ Արտեկրում կրթությունը շարունակելը գերադասող հարցվածների գրեթե կեսը նախապատվությունը տալիս է ԱՄՆ-ին:
- ▶ Մասնագիտության վերաբերյալ տեղեկատվության հիմնական աղբյուրները հանդիսանում են սոցիալական ցանցերը, սեփական նախաձեռնությամբ մասնագիտությամբ հետաքրքրվելը, ինչպես նաև գրքերն ու մասնագիտական գրականությունը: